ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ԵՎ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ

ք. Երևան **23.01.2025թ.**

Կայացավ ՀՀ առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի (այսուհետև՝ ԱԱՏՄ) կառավարման խորհրդի (այսուհետև՝ Խորհուրդ) հերթական նիստը:

Մասնակցել են՝

Ա. Ավանեսյան	- ՀՀ առողջապահության նախարար (Խորհրդի նախագահ)
Տ. Հակոբյան	- ՀՀ վարչապետի աշխատակազմի տեսչական մարմինների աշխատանքների համակարգման գրասենյակի ղեկավարի տեղակալ
Ա. Խոջոյան	- ՀՀ էկոնոմիկայի նախարարի տեղակալ
Վ. Սիրունյան	- ՀՀ ֆինանսների նախարարի տեղակալ
Տ. Քեյան	- «ՓՄՁ համագործակցության ասոցիացիա» հասարակական կազմակերպության աջակցության ծրագրերի ղեկավար
Շ. Դանիելյան	- Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարանի (ԵՊԲՀ) աշխատակազմի ղեկավար
Հ. Լիլոզյան	- Հայաստանի ամերիկյան համալսարանի Ջերալդ և Փաթրիշա Թրփանճեան առողջապահական գիտությունների ֆակուլտետի գիտաշխատող
Ս. Սարգսյան	- ԱԱՏՄ ղեկավար
Գ. Հովհաննիսյան	- ԱԱՏՄ իրավական աջակցության և փաստաթղթաշրջանառության վարչության պետ (Խորհրդի քարտուղար)
Ա. Դավթյան	- ԱԱՏՄ որակի ապահովման վարչության պետ

Չեն մասնակցել՝

Ռ. Սարգսյան	- ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի տեղակալ
Ժ. Մայիլյան	- «Իրական աշխարհ, իրական մարդիկ» սոցիալական հասարակական կազմակերպության նախագահ

Օրակարգի հարցեր.

1. ԱԱՏՄ 2024 թվականի տարեկան հաշվետվության նախագծի քննարկում և հավանության արժանացում.

2. ԱԱՏՄ որակի ապահովման վարչության 2024 թվականի 4-րդ եռամսյակի հաշվետվության ներկայացում և քննարկում.

3. ԱԱՏՄ 2024 թվականի 4-րդ եռամսյակի գործունեության կատարողականի գնահատման քննարկում և հաստատում.

4. Այլ հարցերի քննարկում

Ա. Ավանեսյանը առաջարկեց հաստատել օրակարգը:

Օրակարգը հաստատվեց:

1. Քննարկվեց օրակարգի հարցը՝

ԱԱՏՄ 2024 թվականի տարեկան հաշվետվության նախագծի քննարկում և հավանության արժանացում

Ս. Սարգսյանը ներկայացրեց ԱԱՏՄ-ի կողմից կատարված աշխատանքները: Նշեց, որ բացի այն ինչ պլանավորված էր ստուգումների տարեկան և գործունեության տարեկան ծրագրերով ԱԱՏՄ-ն իրականացրել է մեծ ծավալի չպլանավորված աշխատանքներ: Առավել ծանրաբեռնված է եղել թեժ գիծ ծառայությունը: Ներկայացրեց իրակացված ստուգումների և վարչական վարույթների մասին, այդ թվում նյութական պահուստին վերաբերող իրավական ակտերի պահանջների պարզելուն ուղղված ստուգումները, արդյունքում բացահայտված խախտումների բնույթի և նշանակված վարչական տույժերի վերաբերյալ: Կատարեց 2022-2023 թվականների համեմատական վերլուծություն: Ներկայացրեց դատական գործերի վիճակագրությունը:

Ա. Խոջոյանը հարցրեց, թե արդյո՞ք առկա են դատական գործեր որոնցով բարձրացվող հարցերի լուծումը կախված է օրենսդրական փոփոխությունների անհրաժեշտությունից:

Տ. Հակոբյանը նշեց, որ ՀՀ վարչապետի աշխատակազմի տեսչական մարմինների աշխատանքների համակարգման գրասենյակի կողմից պարբերաբար իրականացվում է խնդիրների հավաքագրում, վերլուծություն և օրենսդրական նախաձեռնություններ:

Տ. Քեյանը հարցրեց թե ԱԱՏՄ ներկայացված ինչքան վերադաս բողոք է բավարարվում:

Ս. Սարգսյանը պատասխանեց, որ մոտ 40 տոկոս հարաբերակցությամբ բավարարված բողոքներ կան: Եթե քննության ընթացքում պարզվում է, որ առկա է թերություն, ապա ներկայացված բողոքը բավարարվում է:

Ա. Խոջոյանը հարցրեց թե արդյո՞ք ԱԱՏՄ-ին լիազորությունների լայնացումը կբերի տնտեսավարող սուբյեկտների կողմից իրականացվող գործունեության խաթարման:

Ս. Սարգսյանը նշեց, որ միանշանակ ոչ:

Ա. Ավանեսյանը նշեց, որ տնտեսավարող սուբյեկտներին պատասխանատվության ենթարկելու առումով կարելի է առաջին փուլում նախազգուշացնել, իսկ դրանից հետո, երբ խախտումը կրկնվում է՝ կիրառել գումարային տուգանք, ինչի արդյունքում չի բացառվի բողոքների նվազումը:

Ս. Սարգսյանը նշեց նաև արձանագրված խախտումների վերաբերյալ, մասնավորապես, որ կան որոշ անբարեխիղճ տնտեսավարողներ, որոնք դեղերի մեծածախ իրականացման լիցենզիայի բացակայության դեպքում ՀՀ դեղեր են ներմուծում, որից հետո իրացնում են դրանք:

Ա. Ավանեսյանը և Ա. Խոջոյանը առաջարկեցին ներկայացնել առկա խնդիրները և դրանց ուղղված լուծումների առաջարկությունները՝ հետագա ընթացք տալու նպատակով:

Տ. Քեյանը հավելեց ԱԱՏՄ-ի շինարարության ոլորտում աշխատանքային իրավունքի ստուգաթեթերի հարցերի ծավալի վերաբերյալ և նշեց, որ դրանք պետք է կրճատվեն:

2. Քննարկվեցին օրակարգի հարցերը՝

- ԱԱՏՄ որակի ապահովման վարչության 2024 թվականի 4-րդ եռամսյակի հաշվետվության ներկայացում և քննարկում.

- ԱԱՏՄ 2024 թվականի 4-րդ եռամսյակի գործունեության կատարողականի գնահատման քննարկում և հաստատում

Ա. Դավթյանը ներկայացրեց ԱԱՏՄ-ի կողմից իրականացված աշխատանքների մասին. Մասնավորպես ներքին կարգապահական կանոնների խախտումների, իրականացված ստուգումների, վարչական վարույթների վերաբերյալ, ինչպես նաև դրանց արդյունքում արձանագրված խնդիրների մասին: Միաժամանակ ներկայացրեց Տեսչական մարմնի դեմ բերված բողոքների և դրանց արդյունքների վիճակագրությունը և բողոքների պատճառները, ինչպես նաև ծառայողական քննությունների անցկացման գործընթացի, տույժերի բողոքարկումներն ու արդյունքները, թեժ գիծ ծառայության և հաստիքների համալրման վերաբերյալ:

Ա. Ավանեսյանը հարցրեց, թե ինչու երկար ժամանակ չհամալրվող հաստիքները չեն կրճատվում:

Ս. Սարգսյանը նշեց, որ որոշ հաստիքներ նախատեսվում է կրճատել, իսկ մյուս հաստիքները՝ նոր ստեղծվող ստորաբաժանումներում նախատեսելու համար է: Նշեց նաև, որ հաստիքների համալրման նպատակով սահմանված կարգով հրապարակվում են հայտարարություններ, սակայն մարզերում առկա է մասնագետների բացակայություն:

Ա. Ավանեսյանը նշեց, որ պետք է փոխել մասագետներին ներկայացվող պահանջները:

Ա. Ավանեսյանը հարցրեց նաև ԱԱՏՄ-ին վերապահված ֆունկցիոնալության գնահատման նկատմամբ լիազորության շրջանակներում ինչ է վերահսկելու:

Ս. Սարգսյանը նշեց, որ լիազորության շրջանակներում ներառված է ֆունկցիոնալության գնահատման կարգի նկատմամբ վերահսկողությունը:

Ա. Ավանեսյանը առաջարկեց քվեարկել:

Խորհրդի անդամները օրակարգի բոլոր հարցերին միաձայն քվեարկեցին կողմ (7 կողմ):

Որոշվեց.

1. Հավանություն տալ ԱԱՏՄ 2024 թվականի տարեկան հաշվետվության նախագծին:

2. Հաստատել ԱԱՏՄ 2024 թվականի 4-րդ եռամսյակի գործունեության կատարողականի գնահատականը:

3. Ընդունել ի գիտություն ԱԱՏՄ որակի ապահովման վարչության 2024 թվականի 4-րդ եռամսյակի հաշվետվությունը:

4. ԱԱՏՄ ղեկավար Ս. Սարգսյանին.

1) Խորհրդի քննարկմանը ներկայացնել ԱԱՏՄ համապատասխան քաղաքացիական ծառայության պաշտոնների անձնագրերում նախատեսված մասնագետներին ներկայացվող պահանջների վերաբերյալ փոփոխությունների մասին առաջարկներ,

2) ներկայացնել ԱԱՏՄ-ի կողմից ՀՀ դեղեր ներմուծելու ոլորտում վերահսկողության արդյունքում արձանագրված օրենսդրական խնդիրները և դրանք կարգավորելու վերաբերյալ առաջարկություններ:

5. ՀՀ վարչապետի աշխատակազմի տեսչական մարմինների աշխատանքների համակարգման գրասենյակի ղեկավարի տեղակալ Տ. Հակոբյանին առաջարկել քննարկել ԱԱՏՄ ռիսկի վրա հիմնված ստուգումների ստուգաթերթերի հարցերը կրճատելու վերաբերյալ հարցը և անհրաժեշտության դեպքում ներկայացնել համապատասխան առաջարկություններ:

ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Ա. ԱՎԱՆԵՍՅԱՆ

ԽՈՐՀՐԴԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Գ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ